



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թ.

N 656-Ն

ք. Ստեփանակերտ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 25-ի «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 19-Ն որոշման 46-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Հաստատել նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01-63  
1 հոկտեմբերի 2013

## Կ Ա Ր Գ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են նախքան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 944-Ն որոշմամբ հաստատված որակավորումների ազգային շրջանակը (այսուհետև՝ ՈԱՀ) ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ուսումնական հաստատությունների կողմից շնորհված՝ ՈԱՀ-ով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթության (այսուհետև՝ մասնագիտական կրթություն) մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումների համապատասխանեցման հետ կապված հարաբերությունները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների և հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների՝ նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով կրթություն ստացած շրջանավարտների վրա:

#### II. ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից տրված տարրական կրթության մասին տեղեկանքը, հիմնական կրթության վկայականը և միջնակարգ կրթության ատեստատը հավասարազոր են ՈԱՀ-ի համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 4-րդ աստիճաններին:

4. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը համապատասխանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին՝

1) մինչև 3 տարի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի 3-րդ աստիճանին, իսկ 3 և ավելի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը)՝ ՈԱՇ-ի 4-րդ աստիճանին.

2) հիմնական կամ միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական ծրագրերի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի 5-րդ աստիճանին՝ անկախ կրթական ծրագրի տևողությունից.

3) բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի համապատասխանաբար 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճաններին.

4) մինչև 2011 թվականը ներառյալ շնորհված՝ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

5. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին, ապա որակավորման համապատասխանեցումը կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության՝ օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման լիազոր մարմնի տված տեղեկանքի:

ԼԵՐՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ



Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

